ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա «25» օգոստոս 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 641-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Նունե Ֆրունզեի Ավագյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 4158/2023/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Նունե Ֆրունզեի Ավագյանի (Հասցե՝ Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի փող., շ. 115, բն.46, ՀՎՀՀ՝ 28065452, ՀԾՀ՝ 7004640817) չկատարված հարկային պարտավորությունը 31.07.2023թ-ի դրությամբ կազմում է 16.072.717 դրամ, այդ թվում հարկ՝ 6.909.666 դրամ, տույժ՝ 3.783.042 դրամ, տուգանք՝ 5.380.009 ՀՀ դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 04.08.2023թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կադաստրի կոմիտեից ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշմամբ ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ Նունե Ֆրունզեի Ավագյանի կողմից օտարվել են հետևյալ անշարժ գույքերը.

1. 02.02.2017թ. նվիրատվությամբ օտարվել է Երևան, Կենտրոն, Սայաթ-Նովա պողոտա շ.29/7 տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, որի գույքահարկով հարկման նպատակով որոշվող արժեքը կազմել է 4.101.300 ՀՀ դրամ:
2. 21.04.2017թ. օտարվել է Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Ն. Աշտարակեցու փող., թիվ 1/2 առևտրի և սպասարկման օբյեկտ հասցեում գտնվող անշարժ գույքը, որի պայմանագրային արժեքը կազմել է 4.652.000 ՀՀ դրամ, իսկ գույքահարով հարկման նպատակով որոշվող արժեքը կազմել է 18.457.470 ՀՀ դրամ, այդ թվում շինության արժեքը՝ 18.235.981 ՀՀ դրամ, իսկ հողամասինը՝ 221.489 ՀՀ դրամ:
3. 21.04.2017թ. օտարվել է Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Ն. Աշտարակեցու փող., թիվ 1/1 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքը, որի պայմանագրային արժեքը կազմել է 18.072.000 ՀՀ դրամ, իսկ գույքահարկով հարկման նպատակով որոշվող արժեքը կազմել է 62.691.275 ՀՀ դրամ, այդ թվում շինության արժեքը՝ 61.848.043 ՀՀ դրամ, իսկ հողամասինը՝ 843.232 ՀՀ դրամ:
4. 11.10.2017թ. նվիրատվությամբ օտարվել է Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Ն. Աշտարակեցու փող., 1/4 առևտրի սրահ հասցեում գտնվող անշարժ գույքը, որի գույքահարկով հարկման նպատակով որոշվող արժեքը կազմել է 7.648.283 ՀՀ դրամ, այդ թվում շինության արժեքը՝ 7.607.808 ՀՀ դրամ, իսկ հողամասինը՝ 40.475 ՀՀ դրամ:

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն նշված գույքերի օտարման գործարքները այլ հավասար պայմաններում համարվում են ավելացած արժեքի հարկով հարկվող գործարք և « Ավելացած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է ԱԱՀ վճարման պարտավորություն կրող:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վերոգրյալ գործարքից հաշվարկվում է ԱԱՀ 20% հաշվարկային դրույքաչափով:

ՀՀ կառավարության 19. 02. 2009թ-ի թիվ 199-Ն որոշմամբ սահմանված կարգով մինչև գործարքի իրականացման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմնի չի ներկայացվել իրավահարաբերության ծագման պահին գործող ԱԱՀ-ի հաշվարկը ինչպես նաև ՀՀ պետական բյուջե չեն վճարվել հարկի գումարները:

Արդյունքում՝ սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունը 31.07.2023թ. դրությամբ կազմել է 16.072.717 դրամ, որից հարկ՝ 6.909.666 դրամ, տույժ՝ 3.783.042 ՀՀ դրամ, տուգանք՝ 5.380.009 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով, որը հաշվարկվել է

իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Նունե Ֆրունզեի Ավագյանից գանձել 16.072.717 դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

31.07.2023թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7=4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2018թ	6.909.666	3.783.042	5.380.009	16.072.717	պետական բյուջե	900008000490

1. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե
Զարուհի Ֆարմանյան, հեռ. 010-30-91-91 /91-27/: